

ԱՐՇԱՄ ՏԵՐ - ԽԱՉԱՏՐԵԱՆ



ԵՂԵԳՆՈՒՅԻ

ՀԵՔԻԱԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 1.

Երեսանի օգտակար գիտելիքներ տարածող բնագ.

891.995

S-41

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵԲՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՓՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՍԻ. ԴՈՒԽԻՅ 7.

1909

ԱՐՇԱՄ ՏԻՐ - ԽԱՉԱՏՐԵԱՆ

891.99 Ն.

Տ-41 Ն

ԵՂԵԳՆՈՒՀԻ

ՀԵՔԻԱԹ

1007
33/69

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երեսանի օգտակար գիտելիքներ տարածող ըն-
կերություն

№-1.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԳՐԱՄԻՍ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՏԻ. ՊՈԼԻՑ, 7.
1909

(Ընկերական նւէր
Ս. Գրիգորեանին)



Եզնից շատ առաջ
մի Թագաւոր կար,
Մի որդի ունէր՝ մօ-
րից մինուճար:
Որդին մեծացաւ, հա-
սաւ արբունքի,
Հայրը վճռեց որդուն
պսակի:

Բայց ինչ անում էր հայրը չէր անում,
Որդին չէր լսում, աղանջ չէր դնում:
Հայրը երբ որդուն այսպէս շատ զօռեց,
Որդին այսպիսի մի պայման դրեց.—
«Հայրիկ, ասաց նա, ես չեմ խուսափում.
«Սիրուն, գեղեցիկ կին հիմ քի ուզում.
«Գնա, իմ ուզած աղջիկը գտի՛ր,
«Երբ որ «չէ» ասեմ, գլուխս ջարդիր»
— «Ո՞րն է քո ուզած աղջիկը, որդի,
Ասաց խեղճ հայրը.— «Ասա, հիմ գիտի,
«Գուցէ ճարել տամ, քո սրտով լինի,
«Ես իմ գաւազին չարիք չեմ անի»:
— «Այնպիսի աղջիկ կուգեմ քեզանից,
«Ոչ հօրից լինի, ոչ ծնւած մօրից,
«Որ նա չըլինի մեզ պէս հողեղէն,

«Որ անբիծ, լինի, չքնաղ, հրեղէն...
 «Եթէ ճարեցիր այսպիսի աղջիկ,
 «Ես մինչև մահս կըլնեմ երջանիկ»:
 —Պա, բու տղիս տղայ,—գոչեց խեղճ հայրը—
 «Գնա, տակնուվեր արա աշխարհը,
 «Եթէ այդպիսի աղջիկ ճարեցի՞ր...
 —«Այդ է իմ վերջին կամբը, իմացի՛ր,
 «Որ ինձ սպանէք, կախաղան հանէք,
 «Ես ուրիշ աղջիկ չեմ առնիլ երբէք,
 «Մի հրեշտակ եմ տեսել երազում,
 Նրա ճամբէն եմ ես դեռ սպասում»...
 Հայրը բաց թողեց որդուն իր կամքին,
 Իսկ իրան տւեց ցաւ ու կրակին:
 Շատ անբուն մնաց, շատ խելքին գօռեց,
 Ամեն կողմերից մարդիկ ժողովեց,
 Մարդիկ իմաստուն, խելօք, հանճարեղ,
 Որ ամեն ցաւի ունէին մի դեղ.
 Էլ լողմանին, էլ ջադուքարներ...
 Բայց ոչ ոք մի ճար չըկարաց գտնել:
 Հայրը բաց թողեց որդուն իր կամքին,
 Գլուխը տւեց հոգս ու կրակին:
 Կորցրեց նախկին քունն ու ախորժակ,
 Էլ հանգիստ չունէր ոչ մի ժամանակ:
 Մաքի հետ ընկած գիշեր ու ցերեկ
 Իր պարտէզներից տուն չեկաւ երբէք:
 Զրերի ափին, ծառերի տակին,
 Սրտի դարձերը տալիս էր հովին:
 Օր աւուր նրա դարձը մեծացաւ,
 Ծանր մտքերից հայրը խեղճացաւ.
 Շքեղ պալատի գիւլ-այգիները

Զէին սփոփում նրա դարձերը:
 Եւ նա մտածեց դուրս գալ ամրոցից,
 Դուրս գալ ձանձրալի ծաղկանոցներից,
 Իր տէրութեան մէջ գնալ պտտել,
 Իր որդու համար հարսնացու ճարել:
 Ինչպէս վճռեց այնպէս էլ արեց.
 Կանչեց իր որդուն և միտքը յայտնեց.—
 —«Որդեակ, ձանձրացած իմ պալատներից
 «Եւ ամենօրեայ այս տաղտուկ կեանքից,
 «Ես վճռել եմ մի պտոյտ անել.
 «Իմ ժողովրդի հալ-ահալ տեսնել,
 «Գուցէ յաջողւի—ո՛վ է իմանում—
 «Քո ուզած աղջիկն էլ գտնում եմ, ճարում:
 «Իմ թագն ու գահը ես քեզ եմ թողնում,
 «Իմ տէրութիւնը քեզ եմ հաւատում:
 «Եղի՛ր սիրով լի, բայց խստապահանջ,
 «Միշտ արդարադատ, ազնիւ ու վեհանձ,
 «Չարերին՝ պատիժ, լաւերին՝ պարգև—
 «Սովորական է այդ վարչական ձև:
 «Բայց լաւ տկանջ դիր դու այս խրատին.—
 «Եթէ սիրում ես քո հայր-ծնողին—
 «Ինքդ քեզ պահիր անմեղ, հասարակ:
 «Որ բարքդ լինի բարի օրինակ,
 «Եւ եթէ մի քիչ աչքաբաց մնաս,
 «Ուշքով միշտ դատես օգուտ ու վնաս:
 «Բեռդ չի թւայ պատիժ ու կրակ,
 «Այլ մի ցանկալի և սրբազան պարտք:
 «Ո՛վ գիտէ, գուցէ, ես գնամ, չը գամ,
 «Գուցէ յաւիտեան քեզ կարօտ մնամ:
 «Դէ եկ, համբուրեմ քեզ վերջին անգամ,

«Գնամ թափառեմ, բարով ետ դառնամ»։

Որդին խիստ ցաւեց հօր մտքի համար։

Հայրը վճռել էր գնալ անպատճառ։

Եւ նա ընդունեց իր հօր պատւէրը։

Հայրը մի գիշեր փոխեց շորերը,

Հանեց արքայի թագ ու ծիրանին

Վեր առաւ հետը իր ծեր ծառային,

Իր թագն ու գահը թողեց իր որդուն,

Ինքը իր տանից եղաւ դադարկուն...

Շատ շրջեց, թէ քիչ, Աստուած է գիտում։

Հին հերիաթները այսպէս են պատմում.—

Ուր որ գնում էր, որտեղ որ մնում,

Թէ գիւղ, թէ քաղաք, թէ դաշտ, թէ սարում,

Նա ամեն տեղ էլ մի բան էր լսում.—

«Թագաւորը տղին հարս է որոնում»։

Խեղճ հայր, ինչ անէր. որդին կամակոր

Թող հանգիստ ուտէր, խմէր ամեն օր,

Իսկ նա՝ պանդխտի առած գաւազան,

Թող գնար, որպէս մի թափառական։

Շատ շրջեց, թէ քիչ՝ Աստուած է գիտում.

Ուր որ գնում էր, որտեղ որ մնում,

Թէ գիւղ, թէ քաղաք, թէ դաշտ, թէ սարում,

Նա ամեն տեղ էլ նոյն բանն էր լսում.—

«Արքան իր որդուն հարս է որոնում,

«Այնպիսի աղջիկ չքնաղ, հրեղէն,

«Որ հօրից-մօրից չըլնի հողեղէն»։

Խեղճ, հայր, ինչ անէր. որդին կամակոր

Թող հանգիստ ուտէր, խմէր ամեն օր,

Հայրը պանդխտի առած գաւազան՝

Թող տանից լինէր մի թափառական։

Բայց ուր գնում էր, ուր որ հարցնում,

Նա իր ուղածը գտնել չէր կարում։

Եւ նա մտածեց.— «Ձուր է թափառել,

«Բախտս ինձանից երես է դարձրել»։

Ինքն էլ շուռ եկաւ բախտի երեսից,

Տխուր փոր-փոշման տուն դարձաւ նորից,

Հասաւ ամրոցին յոգնած ոտքերով,

Հեռից նկատեց բուրգերը շարքով։

Եւ որովհետեւ շատ էր բեզարել,

Եօթն օր, եօթ գիշեր ճանփայ էր կտրել,—

Տեսաւ ամրոցին մօտիկ հովիտում

Մի պաղ ու զուլալ աղբիւր է հոսում։

Նստեց աղբեր մօտ, պարկը դրեց ցած,

Քրտնած դէմքն ու ճակատը լաց,

Զրի մէջ դրեց յոգնած ոտները,

Սկսեց շփել, լալ ծնկները—

Եւ մտածում էր իր ցաւի վրա.

Երբ տեսաւ ահա իր գլխի վրա՝

Յուժկու կռնակը յենած չոմախին՝

Մի գնչու հովիւ ցցւած առաջին։

— «Բարեւ, բարեկամ,—ասաց հովիւը։

«Դարձել է, կարծեմ, բախտիդ անիւր.

«Ի՜նչպէս տեսնում եմ, հեռից ես գալիս,

«Որ այդպէս յոգնած նստել ես, լալիս։

«Արի, պատմիր ինձ դարդերը, որդի.

«Գուցէ մի դարման անեմ քո ցաւիդ»։

— «Այ մարդ, վաղ արի իմ տանջանքներից,—

Ասաց ճանքորդը դառն, արտասուլից,—

«Դատարկուն եղած իմ պալատներից,

«Ես ձեռք վեր առայ իմ թագ ու գահից։

«Զաւակ ունէի, մին ու մինուճար,
 «Բայց բնութիւնը կամակոր ու չար.
 «Կանգնել է յամառ ու չի պսակում,
 «Իմ ծեր օրերիս նա չի խնայում,
 Ուզում եմ կարգեմ նրան իմ ձեռքով,
 «Որ հոգիս հանգիստ մեռնեմ ապահով:
 Ասում է.—«գտի՛ր մի աղջիկ դու ինձ,
 Ոչ հօրից լինի, ոչ ծնող-մօրից»:
 «Դէ, ինքդ ասա, ո՞վ մարդ բնութեան,
 «Մի՞թէ հնար է գտնել այդպէս բան:
 «Ո՞վ փչեց նրա խելքին այդ բանը,
 «Ի՞նչ հնարք լարեց այդ անպիտանը:
 «Ազատ մեծացած ազատ որսերում
 «Իր ազատ կեանքը կապել չի ուզում.
 «Հիմա հնարեց այդ խաղն իմ գլխին,
 «Որ ինքը մնա ազատ իր քեֆին...
 —«Լսի՛ր, Տէր-Արքայ, դու քո ծառային.
 «Նայի՛ն առակի այս եղեգներին,
 «Հանի՛ր քո սուրը, մի եղեգ կտրի՛ր.
 «Կանաչ եղեգը դու ջուրը գցի՛ր,
 «Նա քեզ կըղաճնայ մի սիրուն աղջիկ.
 «Մի շարմաղ աղջիկ, անհայր, անմայր:
 «Թող որ կատարւի որդուդ փափազը,
 «Թող որ վերջանայ քո տառապանքը»:
 Ասաց հովիւը, աներևութացաւ:
 Յողնած թագաւորը շմեց, զարմացաւ,
 Յետոյ ակամայ հանեց իր սուրը,
 Մի եղեգ կտրեց, պարզ ջուրը:
 Եղեգը հէնց որ ջրի մէջ ընկաւ,
 Վճիռ ջրերում մի աղջիկ դարձաւ.



Թագաւոր մնաց իր տեղում ապամ

Մի աղջիկ անբան չքնաղ, նազանի,
 Որ քիչ էր մնում մարդու խելք տանի:
 Աչքերը խումար ու չքնաղագեղ,
 Մազերը փարթամ, ոսկի փառահեղ:
 Թագաւորը մնաց իր տեղում ապշած,
 Այդպիսի հրաշք երբէք չէր տեսած:
 Նայեց աղջկայ չքնաղ իրանքին
 Եւ նոր հասկացաւ, թէ ինչո՞ւ որդին
 Շարունակ մաշում, տանջում էր անձը,
 Քանի դեռ չունէր այսպիսի գանձը:
 Եղեգնունին երբ տեսաւ արքային,
 Ամօթից պահւեց եղեգնի միջին,
 Հաւաքեց գլխի փարթամ մազերը,
 Ամօթից կախեց թերթերունքները:
 — «Քիտեմ, զգում եմ քո ցաւը բոլոր.
 «Դու Աղամայ մերկ, չունես հագիւղ-շոր,
 «Մի քիչ սպասիր, մենք կըզանք իսկոյն
 «Քեզ համար հագուստ բերենք խշխշուն»:

Այդ ջրի ափին մի հօտ կար ազատ,
 Հովիւն էր մի սև գնչունի կախարդ,
 Որ հեռու նստած խոտերի վրան,
 Մի առ մի տեսաւ, լսեց ամեն բան:
 Եւ հէնց որ արքան հեռացաւ, գնաց,
 Նա իսկոյն եկաւ, ափից թռաւ ցած.
 Խեղդեց ջրի մէջ այն չքնաղ կոյսին,
 Տարաւ ու ծածկեց եղեգնի միջին,
 Իսկ ինքը՝ հանած հագի քուրջերը,
 Մտաւ ջրի մէջ մինչև ծծերը...

Թագաւորն եկաւ, տեսաւ գնչունուն,
 Շւարեց, մնաց, վայ տւեց գլխուն...

— «Աղջի, ի՞նչ եղաւ, քեզ ի՞նչ պատահեց,
 «Ի՞նչու քո նախկին գեղը խաւարեց:
 «Քեզ պէս հրէշին էլ ուր տանեմ ես,
 «Դու իմ գաւազին յիմար չըկարծես...»
 Գնչունին բացեց իր ջլալ բերան,
 Անբախտ ծնողին տւեց պատասխան:—
 — «Ախ, ես ինչ անեմ, մինչև դու եկար,
 «Արևն ինձ այրեց, սևացրեց իսպառ,
 «Ջրի մէջ ապրած քնքուշ ու շարմաղ,
 «Արևի տապից այրւեցի աւաղ»:

Լսեց ծնողը, գլուխը շարժեց,
 Իր միամտութեան վրա ծիծաղեց.
 Սկիւկ Գնչունուն դուրս հանեց ջրից,
 Ղումաշ շորերը նրան հագցրեց,
 Զուգեց, զարդարեց նոր հարսի նման,
 Եւ թեից բռնած՝ տուն տարաւ նրան:
 Կանչեց իր որդուն, իր իշխաններին,
 Որ յայտնի նրանց իր կամքը վերջին.
 — «Գնացի, ասաց, երկիրներ ընկայ,
 «Քեզ համար, որդեակ, հարսնացու գտայ:
 «Սա հողածին չէ, ոչ հօրից, մօրից,
 «Սրան ես գտայ մեր եղեգնուտից.
 «Միայն չըգիտեմ, ինչպէս պատահեց,
 «Որ սա իր նախկին գեղը կորցրեց:
 «Մինչև ես սրան հասցրի շորեր,
 «Արևը սրա գէմքը այրել էր,
 «Բայց ես յոյս ունեմ, որ մեզ մօտ մնայ.
 «Դարձեալ իր նախկին գեղը կստանայ»:
 Սկիւկ Գնչունուն որ տեսաւ որդին,
 Գլուխը շարժեց, գնաց իր բանին:

Ինչ արեց, չարեց ծնողը թշւառ.
 Սկի մօտ չեկաւ զաւակը յամառ:
 Թողեց իր հօրը և իր տուն ու տեղ.
 Գնաց, դուրս եկաւ դաշտ կանաչագեղ,
 Գտաւ առւակը, ուր որ իր բռնէն
 Մի սիրուն ձկնիկ դառած ոսկեղէն՝
 Եղեգներէ մէջ գնում էր գալիս,
 Կանաչ ափերին համբոյր էր տալիս:
 Տղան բերել էր իր հետը ուռկան:
 Գցեց ուռկանը և բռնեց նրան:
 Բռնեց՝ ոսկեղէն ձկնիկն աննման,
 Գցեց պալատի հաւուղը մարմար,
 Եւ ինքը դարձաւ նրան սիրահար:
 Հայրը իր որդու դարգերը տեսաւ.
 Գնաց հարսի մօտ, ուր խորհուրդ արաւ,
 Թէ ինչպէս անեն, որ նա իր նախկին
 Գեղեցկութիւնը ստանայ կրկին:
 Խաբեբայ հարսը բացեց իր բերան,
Անբախտ ծնողին տւեց պատասխան.—
 — «Պարտէզիս միջի մարմար հաւուղում
 «Մի հատ ոսկեղէն ձկնիկ է լողում:
 «Եթէ այն ձկնի մսից ես ուտեմ,
 «Մի քիչ կըբացւի դէմքս թխադէմ»:
 Թագաւորն ասաց.— Թող այդ էլ փորձենք,
 «Գուցէ իմ որդուն ցաւին ճար անենք»:
 Հրաման տւեց խոհարարներին
 Բռնել հաւուղի ոսկի-ձկնիկին,
 Թագուհու համար պատրաստել խորտիկ,
 Որ ուտի, գուցէ զաւնայ գեղեցիկ:
 Եւ որդին տեսաւ, ինչպէս բռնեցին

Սիրուն ձկնիկը, տարան, մորթեցին.
 Տարան խոհանոց, մաքրեցին կամաց,
 Թագուհու համար արին խորոված:
 Գնչու-թագուհին՝ սրտի նախանձից՝
 Բոլորը կերաւ, բացի փշերից:
 Կանչեց իր մօտ մեծ խոհարարին
 Եւ այսպէս պատուէր տւեց սաստկագին.
 «Այս ողջ փշերը՝ ձկնից մնացած՝
 «Կըտանես կածես թոնիրը վառած,
 «Որ ոչ մի հատ փուշ դէս դէն չընկնի,
 «Թէ չէ իմ ձեռքից էլ չես պրծնի»:
 Որքան որ խիստ էր թագուհու հրաման,
 Բայց մտքներում ծաղրում էին նրան:
 Միամիտ մարդիկ, կախարդ չը տեսած,
 Պարզ ու հասարակ, սրտները բաց,
 Ո՞ւմ դարձն է կտրել, ո՞վ էր մտածում,
 Թէ աշխարհի մէջ ինչեր են լինում:
 Ինչպէս պատահեց՝ ձկան փշերից
 Ընկան փշերը հաւուղի ափին
 Եւ տնկւեցին խոտերի միջին:
 Երեք չորս ամիս անցան, չի անցան—
 Ընկած փշերից երկու ծառ բուսան,
 Երկու չինարի ծառ հովասուն,
 Որ նայողների խելքն էին տանում:
 Արքայի որդին հաւուղը թողեց,
 Ողջ ուշք ու միտքը ծառերին տւեց:
 Փորում էր նրանց տակի կոշտերը,
 Ետոցով կտրում չորացած ճիւղերը,
 Պահում էր, ջրում, խնամում նրանց,
 Ինչպէս սիրահար հմուտ պարտիզպան:

Սկիւի Գնչուհին նայում էր, նայում,
 Սիրտը նախանձից ճաքում, տրաքում:
 Թագաւորն ասաց մի օր իր հարսին.—
 —«Հիմա ի՞նչու է փախչում իմ որդին:
 «Այն սիրուն ձուկն էլ կերար, լափեցիր:
 «Դարձեալ նոյն սեւը, գէշը մնացիր»:
 Գնչուհին բացեց իր սկիւի բերան,
 Անբախտ ծնողին տւեց պատասխան:—
 —«Մարմար հաւուզի ափի ծառերը,
 «Այդ սաղարթախիտ չինարիները,
 «Այնպէս փակում են լոյսն իմ սենեակի,
 «Որ ես չեմ տեսնում շողն արեգակի.
 «Թող կտրեն իսպառ ծառերն արմատից,
 «Որ ես գուրկ չըմնամ լոյս արեգակից»:
 Թագաւորն ասաց՝ այդ գոյգ ծառերը,
 Այդ գեղատեսիլ չինարիները,
 Այնքան սազում են իրենց պարտէզին,
 Այնքան սիրում է նրանց իր որդին,
 Որ նա չի կարող նրանց կտտորել,
 Միակ դաւակի խաթրին դիպչել...
 Գնչուհին տեսաւ, որ այդ էլ չանցաւ,
 Ընկաւ անկողին, սուտ հիւանդացաւ:
 Էլ ոչ խօսում էր, ոչ տեղից ելնում,
 Հոգևորքի պէս հեծեծում, տնքում:
 Ոչ որ չէր մտնում նրա սենեակը,
 Ոչ որ չէր գիտում սև նպատակը:
 Տնքաց, տնքանքաց թագուհին այսպէս,
 Եւ մի օր դարձաւ այնքան աներես,
 Որ կանչել տւեց լողման-հաքիմներ,
 Ամեն չար աչքից փրկող կախարդներ,

Էլ նետ դնողներ, գարի գցողներ,
 Էլ հազար տեսակ ջադու-պառաւներ,
 Էլ վախ չափողներ, էլ մոմ թափողներ,
 Էլ չար սատանի բերան կապողներ,
 Էլ նիաթ կապող, էլ մազ պտտող,
 Էլ բուլթ եղունկի վրա գուշակող...
 Ամեն կողմերից եկան, ժողվեցին:
 Որ մի ճար անեն թագուհու ցաւին:
 Շատ մտածեցին, խելքներին տւին,
 Վերջն եկան հասան էլ նոյն համոզման,
 Որ այն չինարի ծառերն աննման
 Խիտ սաղարթներով խիստ հով են անում,
 Լուսամուտների առջևն են փակում,
 Թագուհին գուրկ է մնում սրելից,
 Հիւանդանում է նրանց ցուրտ հովից:
 Եթէ ծառերը կտրեն, հեռացնեն,
 Լուսամուտների առջև բացեն,
 Գուցէ թագուհին մի քիչ լաւանայ,
 Մահաւան անկողնից ելնի, վեր կենայ:

Ծերունի հայրը մնաց շւարած:
 Նա վերջին անգամ սաստիկ զայրացած՝
 Ասաց, որ գնան, ծառերը կտրեն,
 Գուցէ կտրւի հարսի մահանէն:

Եկան ամենի փայտահատները,
 Վեր առան իրանց սուր կացիները,
 Տւին, կտրեցին ծառերն արմատից.
 Եւ ցախ արեցին սիրուն ծառերից:
 Բայց ինչպէս եղաւ, ինչպէս չի եղաւ,
 Սուր կացնի տակից մի տաշեղ թռաւ:
 Թռաւ տաշեղը թեթև ու սիրուն,

Թուաւ ու ընկաւ մի հարկան տուն:
Այնտեղ մի պառաւ կին էր բնակւում,
Որ ողջ պալատի լացքն էր անում:
Ինքն ու իր գլուխ մի պառաւ մենակ,
Պալատի մօտին ունէր մի տնակ:
Ամբողջ ցերեկը լացք էր անում,
Գիշերը գալիս, իր տանն էր բնում:

Պառաւը եկաւ իր օթեանը,
Տեսաւ մի տաշեղ ընկած է տանը:
Փոքրիկ, գեղեցիկ տաշղի մի կտոր
Տափակ, հաւասար ափերը բոլոր:
Վերցրեց տարաւ տախտակը նա տուն,
Իր խայաթին էր վրան փաթաթում:
Ամբողջ գիշերը՝ խայաթին վրան՝
Սիրուն տախտակը ընկած պատրհան,
Մինչև առաւօտ լռիկ մնում էր,
Եւ հէնց պառաւը տանից գնում էր,
Նա ցած էր թռչում թողոտ յատակին,
Դառնում էր սիրուն աղջիկը նախկին,
Եւ՝ մի յարգևոր խոնարհ հարսի պէս՝
Աւում, մաքրում էր թէ դուրսը, թէ ներս:
Եւ երբ ամեն բան մաքրում էր կարգին,
Փոխարկւում, դառնում էր տաշեղ կրկին,
Որ երբ պառաւը գալիս էր, տեսնում,
Չարմացքը նրան բռնում էր, տանում...

Միայնակ պառաւ, նախապաշարւած,
Սատանաների անունից սարսափ.
Նա շատ էր վախում այս պատահարից,
Սիրտը ճաքում էր վախ ու երկիւղից:
Շատ ուր մտածեց, զօռ տւեց խելքին,

Մի օր թաք կացաւ ծալքի ետեին,
Որ տեսնի, թէ սա ի՞նչ բան է արդեօք,
Իրան է թւում թէ խիալ կարծեօք:
Մտաւ պառաւը ծալքի ետեւ
Եւ իրան քաշեց իր շունչն ու հեւ:
Մէկ էլ ինչ տեսնի—հրաշք հրաշքից.
Հրէս տաշեղը թուաւ իր տեղից,
Փոխարկւեց, դարձաւ մի սիրուն աղջիկ,
Մի շարմաղ էակ, չքնաղ, գեղեցիկ...
Եօթն օր, եօթ գիշեր մարդ չուտէր-խմէր,
Հէնց նրա շարմաղ պատկերին նայէր...
Շարմաղ աղջիկը առաւ աւելը,
Սրբեց, աւելեց տախտի տակերը,
Բերեց շուր ածեց փոքրիկ տաշտակը,
Ջրջնեց, մաքրեց թողոտ յատակը.
Էլ աման չաման, կաթսայ ու պղինձ,
Բոլորն էլ սրբեց ու մաքրեց նորից.
Եւ հէնց ուզում էր՝ իր բանը պրծած՝
Գնայ իր տեղը՝ տախտակ փոխարկւած,
Պառաւը թուաւ ծալքի ետեից
Եւ բռնեց նրա ոսկի մագերից:
«Ես տեսայ, ասաց, ողջ քո հունարը,
«Դու ինձ՝ մի աղջիկ, իսկ ես՝ քո մայրը.
«Ասածուց խնդրածս էր մեղաւոր բերնով,
«Որ ինձ մի աղջիկ բաշխէր շնորհքով»...

Որք եղեգնուհին բացեց իր բերան,
Բարի պառաւին տւեց պատասխան.—
—«Մայրիկ, կըմնամ, կապրեմ քո տանը,
«Միայն դու լսիր իմ այս պայմանը.
«Եթէ սիրում ես քո չարն ու բարին,

«Ոչ որի դեռ բան չասես իմ մասին:
 «Գնա բեզ համար արքունի պալատ,
 «Ամբողջ օրերով ման արի ազատ.
 «Երեկոները երբ որ տուն դառնաս:
 «Այստեղ ամեն բան պատրաստ կունենաս:
 «Միայն մի խնդիր ունեմ բեզանից,
 «Որ դու չըծածկես երբէք ինձանից,
 «Թէ թագաւորի շքեղ պալատում
 «Ո՛վ ինչ է անում, ո՛վ ինչ է ուզում,
 «Ի՛նչպէս է ապրում Գնչու-թագուհին,
 «Ի՛նչու է փախչում արքայի որդին
 «Իր հայրենական փարթամ ամրոցից,
 «Իր պարտէզներից, իր ծնող հօրից,
 «Ինչո՞ւ չի սիրում իր նշանածին,
 «Այդ նշանածը հօ չէ՞ հողածին...
 «Մի խօսքով՝ ես քեզ կարգում եմ լրտես,
 «Ամեն բան լսիր, ամեն բան լաւ տես,
 «Որ իրիկները, երբ տուն գաս ինձ մօտ,
 «Բոլոր անցքերը պատմես համառօտ:
 «Բայց որպէս զի դու միշտ զգոյշ լինես
 «Եւ իմ խնդիրը մտահան չանես,
 «Ես քեզ նախօրօք զգուշացնում եմ—
 «Որ ինձ խաբել ես, ես քեզ կըթողնեմ,
 «Կերթամ, կըփախչեմ ես քո խրճիթից,
 «Եւ դու կըզրկես շատ բարիքներից:
 «Ես անկեղծօրէն ողջ քեզ պատմում եմ,
 «Որպէս իմ մայրը, ես քեզ սիրում եմ,
 «Ես կըլինեմ քո խոնարհ աղջիկը,
 «Դու էլ կատարիր իմ խեղճ խնդիրը:
 «Մի առ ժամանակ դու ինձ խնամի,

«Մինչև որ տեսնենք՝ Աստուած ինչ կամի...»:

Պառաւը մէկ մէկ բոլորը լսեց,
 Եւ իր աղջկան միամտացրեց.—
 Ասաց.— «Այ որդի, քո պառաւ նանը
 «Այդքան անփորձ չի, գիտի իր բանը.
 «Ես քեզ սիրեցի, որպէս իմ աղջիկ,
 «Դու էլ ինձ սիրիր, որպէս քո մայրիկ:
 «Հիմա հասկացայ—արքայի որդին
 «Ինչո՞ւ չի սիրում իր նշանածին»:
 — «Այդպէս մի խօսի՛ր, ասաց աղջիկը:
 «Նա նշանած չէ, այն սև խափշիկը,
 «Իսկ թէ նա ո՛վ է, շուտով կիմացւի.
 «Մի օր գաղտնիքը յանկարծ կըբացւի,
 «Վերեւն Աստուած կայ, ներքեւ օրէնք,
 «Հախը նհախին չի մնալ երբէք»:

Կտրեցին սիրուն հով կաղնիները,
 Բացին թագուհու լուսամուտները:
 Թէժ արեգակը՝ լուսամուտներից՝
 Այրում վառում էր սենեակը շոգից:
 Խափշիկ թագուհին իր ներքին դարդից
 Հալւում, մաշւում էր ցաւ ու կրակից,
 Արնն էլ կարծես թէ չէր խնայում,
 Որքան ուժ ունէր վառում տապալկում.
 Շատ էր նեղանում խափշիկ թագուհին,
 Աւելի խիստ էր կրակը ներքին,
 Ցերեկը տանջւում վառ արեգակից,
 Գիշերը տանջւում սրտի կրակից:
 Նախանձ կրքերի մի գոհ կամակոր,
 Հալւում, մաշւում էր, տանջւում օրէցօր
 Իսկ թագաւորի որդին կամակոր

Նրա անունը չըլիշեց մի օր:

Խափշիկ թագուհին գիտէր ամեն բան:
Դեռ Եղեգնուհին ազատ ու կենդան
Կենում էր, ապրում այս լոյս աշխարհում,
Բայց թէ ինչտեղ է, այդ չէր իմանում:
Ընկաւ մտքի հետ, զօր տւեց խելքին.
Վճռեց փորձել հնարը վերջին:—

Պահանջեց իսկոյն որ ամեն կողմեր
Գնան, ժողովեն վարպետ աղջիկներ,
Որ ձեռագործի մէջ վարպետ լինեն,
Որ ոսկի-փուլակ, որ գիւլաբաթին
Ու անձեռագործ մարգարիտ շարեն,
Եւ օրօրոցի ծածկովի գործեն.—
Մի՛ անձեռագործ ծածկովի շքեղ,
Ողջ մետաքսահուռ, բանւածք փառահեղ,
Որ առանց ասեղ, անձեռնանկար
Լինի յերուրած ամեն նախշ ու կար:
Խեղճ ծնող-հայրը լսեց անխռով,
Շարժեց գլուխը իր մտքամոլոր:
Ինքն էր, մի հատիկ զաւակ սիրասուն,
Յոյս ու ապաւէն իր ծեր օրերուն:
Յուսահատ մարդը շատ չի մտածում,
Նա ամեն շիւղից բռնում է, փորձում:
Նա կանչեց իսկոյն իր հին ծառային
Եւ պատւէր տւեց յայտնել աշխարհին
Իր արքայական հրամանն անեղ.—
—«Ո՛վ աղջիկ ունի — գեղեցիկ, տգեղ,
«Անխօս ուղարկեն թագուհու պալատ,
«Բոլորի համար նիւթեր կան առատ,
«Որ այնտեղ պիտի գործեն ձեռագործ»:

«Մի արքայական մանկական ծածկոց.
«Մի անձեռագործ ծածկովի շքեղ,
«Ողջ գիւլաբաթին, զարդեր փառահեղ,
«Որ երբ թագուհու սրտովը լինի,
«Գործող աղջիկը անուն կը հանի»:
Բացւեցին ազատ պալատի դռներ,
Եկան ժողեցիին խումբ-խումբ աղջիկներ...
Ով տանը հասած մի աղջիկ ունէր,
Ուզեց անպատճառ իր բախտը փորձել:
Պալատը դարձաւ ջրի ճանապարհ.
Ո՞վ չէր ուզիլ, որ ցոյց տայ իր հունար:
Բայց և ոչ մինը չըկարաց գործել
Թագուհու ուզած ծածկովին անթեւ...

Մի օր պառաւի խոնարհ աղջիկը
Ընկաւ իր նանի ոտներն ու գիրկը,
Ասաց.—«Թող ես էլ գնամ պալատը,
«Թող ես էլ գնամ, փորձեմ իմ բախտը,
«Գնացէ կարեցայ ծածկովին գործել.
«Գնացէ կարեցայ մուրազիս հասնել»:
Պառաւը նրա խնդիրքը լսեց.—
«Շատ լաւ, աղջիկս. ինչ կայ, որ, ասեց,
«Միայն չըգիտեմ, թէ ինչպէս անեմ.
«Բոլորն էլ գիտեն, ես աղջիկ չունեմ»:
—«Դա մի պատճառ չի, ասաց աղջիկը.
«Երբ բացւեց բանը, բացւեց գաղտնիքը,
«Արքայի որդին քեզ չի մոռանալ,
«Ինչ սիրտդ ուզեց, կարող ես ստանալ»:

Պառաւը դստեր խնդիրքը լսեց,
Գլուխը լաց, մազերը սանրեց:
Զուրեց, զարդարեց համեստ աղջկան,

Թեկցը բռնեց ու տարաւ նրան,
Երբ թագաւորը տեսաւ պառաւին,
Տեսաւ նրա հետ իր եղեգնունին,
Համեստութիւնից աչքերը կախել,
Աննման դէմքը վարդի պէս բացւել,
Իսկոյն ճանաչեց ու շատ զարմացաւ:
Եկաւ նրանց մօտ և այսպէս ասաւ.—
—«Ես որքան գիտեմ, դու գաւազն չունես»:
«Այս հրեշտակը ո՞վ է տւել քեզ»:

Պառաւը ընկաւ նրա ոտերը—
Ասաց.—«Խնայի՛ր իմ ծեր օրերը:
«Քեզանից պահեմ, Աստծուց ինչ պահեմ»:
«Սա մի հրաշք է, ես էլ չըզիտեմ»:
«Գիշեր ու ցերեկ իմ աղօթքն էր.
«Որ Աստուած ինձ մի աղջիկ պարգևէր.
«Աստուած լսեց իմ անշար խնդիրը,
«Եւ ինձ պարգևեց այս որբ աղջիկը»:
«Այսօր հնազանդ քո հրամանին,
«Պալատ եմ տանում, տեսնի թագունհին,
«Գուցէ աջողի գործել ծածկովին»:
«Գուցէ հաւանի սրան թագունհին»:

Թագաւորն ասաց.—«Շատ լաւ ես արել»
«Եւ ես կարծում եմ, որ չես սխալւել»:
«Շուտով ես ինքս էլ պիտի գամ այնտեղ...»
«Կարծես, տեսել եմ ես դրան մի տեղ»:
«Միայն չեմ յիշում թէ երբ կամ ո՞րտեղ»
«Որքան չքնաղ է, ո՞հ, որքան անմեղ»:

Արքայի որդին՝ տխուր ու տրտում,
Պարտէզի միջին ծաղիկ էր ջրում.
Ու հեռուից տեսաւ իր հայր-արքային,

Շտապ գալիս էր՝ ժպտը դէմքին:
Մօտեցաւ հայրը, իր որդուն նայեց,
Անուշ ժպտով «բարիւոյս», ասեց.—
«Ի՞նչ ես փորփրում պաշտէզ ու այգին»:
«Լաւ այգեպան ես դարձել իմ գլխին»:
Մի՞թէ սագում է արքայի որդուն
«Խռովկանի պէս մնալ միշտ տրտում»:
«Քո նշանածը, հիւանդ թագունհին,
«Միրուն աղջիկներ հաւաքած գլխին,
«Էլի չըզիտեմ ինչ է հնարել»:
«Դեռ ջուր չըսեսա՞՛՛ռնե՛րն է հանել,
«Ուզում է գործեն ծածկովի չքեղ,
«Ողջ գուլաբաթին, մանւածք փառահեղ»:
«Որ առանց ասեղ, անձեռնանկար
«Լինի յերուրած ամեն նախշ ու կար»:
«Օրն հազար աղջիկ գալիս են գնում,
«Օրն հազար աղջիկ չափում են ձևում,
«Սակայն ոչ ոքի դեռ չի աջողւել
«Թագունհու ուզած ծածկովին գործել»:
«Եկ այսօր մենք էլ գնանք միատեղ»:
«Շատ զարմանալի բաներ կան այնտեղ»:

Արքայի որդին պարտէզը թողեց,
Իր հօր խնդիրը նա մերժել չուզեց,
Գնաց իր հօր հետ թագունհու պալատ.
Տեսաւ, խոնւած աղջիկներն ազատ,
Գործի են գցել ասեղ ու մատնոց,
Պալատ՝ ի՛նչ պալատ, մի արհեստանոց:
Գործում են, կարում, հիւսում յերուրում,
Շողակ մարգարիտ, փոլակ շողջողուն,
Է՛լ ազնիւ մետաքս, ոսկէհուռ դիպակ,

Էլ ոսկի յուլունք, էլ ոսկի փուլակ,
 Էլ հազար գոյնի թելեր աբրեշում,
 Էլ հազար գոյնի ծաղիկներ նաշխուն:
 Բոլորի ձեռքին խշխշուն դիպակ,
 Բոլորի ձեռքին ասեղ ու փուլակ:
 Ձևում են, կարում, շարում, զարդարում,
 Առասպելական ձևեր նկարում:
 Մէկն հնարում է մի ձի աննման
 Մէջքին քաջ որսորդ, ձեռքին մի թառույն,
 Երկրորդը՝ բռնած կարմիր թուխակին՝
 Ուզում է յաղթել երգիչ սոխակին:
 Սա զօր էր տալիս հին հէքիաթներին,
 Նախշում, զարդարում փայլևաններին,
 Ազնաւուր դէմքով, կրակ աչքերով,
 Սոթթած, հոլանի ջլուտ թևերով,
 Իրար դէմ կանգնած աչք էին ածում,
 Նայողի վրա սարսափ տարածում:
 Ոմանք սիրահար մի այլ տիպերի,
 Դուրս էին բերում կենդանիների
 Սիրուն պատկերներ, մարալ ու ջէյրան,
 Սիրուն գլուխներ, պոզերը վրան:
 Մի խօսքով, ինչ որ հունար ունէին,
 Ինչ արտադրում էր գեղարւեստը հին,
 Ինչ որ տալիս էր հին-արաբական
 Ծաղկած արւեստը ձեռագործական,
 Հանդէս բերեցին, զրեցին ի տես,
 Պալատը դարձաւ մի ցուցահանդէս:
 Գնչու թագուհին գնում էր գալիս,
 Մէկ մէկ տնադում, մտիկ էր տալիս.
 Բայց ոչ մի բանի հաւան չէր կենում.

Կարծես երկնից կրակ էր ուզում:
 Իսկ թագաւորը և իր խեղճ որդին
 Լուռ նայում էին ձեռագործներին:
 Շքեղ, զարդարուն գործածքներն ազնիւ
 Այնքան շատ էին, այնքան բազմաթիւ,
 Որ ամենախիստ ճաշակի տէրը
 Չէր կարող ջոկել միջի վատերը:

Միայն պառաւի աղջիկը այնտեղ,
 Ոչինչ չէր գործում, նստել էր անմեղ:
 Յուլունք ու փուլակ առջևը թափած՝
 Տխուր նստել էր, թևերը խաչած:
 Արքայի որդին նրան մօտեցաւ,
 Անուշ նազանքով խօսել սկսաւ.
 — «Ասա, ո՞վ ես, դու, աղջիկ աննման,
 «Ինչո՞ւ ես նստել անգործ ու անբան.
 «Մի՞թէ չես ուզում, որ քեզ հաւանեն,
 «Քո ձեռագործը տեսնեն ու գովեն:
 «Գիտեմ, թագուհին շատ խստապահանջ,
 «Շատ մանրակրկիտ, շատ է քմահաճ.
 «Եթէ երկնքից աստղ էլ ցած բերէր,
 «Նա չի՛ հաւանիլ, չի գովիլ երբէր.
 «Բայց եկ, լսի՛ր ինձ, քո բախտը փորձի՛ր,
 «Գուցէ թագուհու սիրտը շահեցիր:
 «Բախտը, ասում են, կոյր է ու անգուլթ,
 «Իր բարիքները բաշխում է անփոյթ.
 «Նա չի նայում շատ քո սիրտ ու հոգուն,
 «Քո ջիւան ջանին նա չի խնայում»...
 Իսկ Եղեգնուհին բացեց իր բերան,
 Արքայի որդուն տւեց պատասխան.
 — «Թագուհին դեռ թող նայի ամենին.

«Երբ որ նայելով հասաւ իմ հերթին,
«Ես կըխնդրէի, որ դո՛ւ էլ, հայրդ էլ,
«Իմ դատին լինէ՞ք դուք գատաւորներ:
«Վերեւն Աստա՛ծ կայ, ներքեւ՝ օրէ՛նք,
«Հախը ննախին չի՝ մնալ երբէք»:

Արքայի որդին կարծես հասկացաւ,
Խռոված միտքը յանկարծ թափ առաւ.
Գնաց իր հօրը խնդրեց խսկոյն,
Որ գայ և լսի մի նոր պատմութիւն:
Եւ հայրը եկաւ: Որդին ժպտալով
Պատմեց իր հօրը անհուն բերկրանքով,
Որ նա գտել է մի աղջիկ սիրուն,
Որին տեսել է կարծես երազում:
Թագաւորն եկաւ, մնաց շիւարած,
—«Սա մեր պառաւի աղջիկն է»—ասաց,
«Միայն չըզիտեմ, թէ երբ կամ որտեղ
«Կարծես տեսել եմ ես դրան մի տեղ»:

Արքան զօրեց իր ծեր մտքերին,
Սակայն մտքերը դաւաճանեցին,
Եւ նա չըգտաւ, չըկարաց յիշել,
Թէ այդ աղջկան որտեղ է տեսել:
Խսկոյն կանչեցին իրան, պառաւին,
Պառաւը եկաւ խոնարհ հրամանին:
—«Արի՛ մեզ պատմի՛ր, պառաւ, գաղտնիքը,
«Որտեղից գտար դու այս աղջիկը.
«Որքան որ զիտենք, դու աղջիկ չունես,
«Այս հրեշտակը ո՞վ է տւել քեզ»:

Պառաւը ընկաւ նրանց ոտքերը.
Ասաց. — «Խնայեցէ՛ք իմ ծեր օրերը:

«Այն օրը, երբ ես գտայ այդ փէրին»),
«Ուզեցի գալ ձեզ պատմել ամենին,
«Սակայն սա ընկաւ իմ ոտ ու ձեռքը,
«Աղաչանք արեց, լսեմ խնդիրքը,
«Ոչ ոքի դեռ բան չասեմ իր մասին,
«Մինչև որ բացւի գաղտնիքը բանին:
«Հիմա, որ բացեց սրա գաղտնիքը,
«Թող պատմութիւնը անի աղջիկը»:

Մատնեց պառաւը, մատնեց աղջկան:
Աղջիկը խնդրեց, որ բերեն իրան
Մի վազ խաղողի՝ վաղուցւայ կտրած,
Ողջ տերեւները չորացած, թափւած,
Եւ մի արագաղ թող մորթեն, բերեն,
Որպէս վկաներ սեղանին դնեն,
Որ երբ որ ինքը գաղտնիքը բանայ,
Նրանք հաստատեն և կանգնեն վկայ:
Հայրն ու որդին մնացին ապշած:
Երկար տարիներ գատաւոր եղած,
Շատ չար ու բարի գործ էին տեսել,
Բայց ոչ մի անգամ չէին պատահել,
Որ մի գործի մէջ վկաներ լինեն
Մի մորթած արջոր կամ մի ճիւղ վագին:
Թագաւորն ասաց. — «Ես չեմ զարմանում,
«Բերէ՛ք մի արջոր, մորթեցէ՛ք խսկոյն,
«Մի արատ**») բերէ՛ք մեր ցախատնից,
«Տեսնենք, ի՞նչ է դուրս գալիս այս բանից.
«Միայն խնդրում եմ, յայտնէ՛ք ամենին,
«Իմ իշխաններին. մեծին ու փոքրին,

*) Փէրի—յաւերժահարս:

**) Զորացած վազ խաղողի.

«Որ գան ժողովեն հէնց այս սրահում,
«Ասացէք—արքան ձեզ է սպասում»:

Իսկոյն բերեցին, դրին մի սեղան,
Մի մորթած աքլոր, մի չոր վագ վրան:
Բոլոր իշխաններ, նազիր ու վագիր,
Իրանց արքայի պատէրին հագիր,
Եկան լցւեցին թագուհու սրահ,
Փառքի նշաններ կուրծքերի վրա:
Սեղանի գլխին նստեց աղջիկը,
Նախշուն փուլակներ թափեց իր գիրկը,
Հետը գործում էր սիրուն ծածկովին,
Հետը պատմում էր դարդերը սրտին:

«Մի թագաւոր կար, ունէր մի որդի,
«Որդին հասել էր, ուզեց պսակի,
«Բայց ինչ անում էր հայրը, չէր անում,
«Կամակոր որդին աւանջ չէր գնում:
«Նա պսակելուց փախչել չէր ուզում,
«Միայն այնպիսի աղջիկ էր ուզում,
«Որ նա չըլինէր մեզ պէս հողեղէն,
«Որ անբիծ լինէր, չքնաղ, հրեղէն:
«Խեղճ հայրը թողեց որդուն իր կամբին,
«Եւ իրան տւեց դարդ ու կրակին:
«Նա այնքան տարի աշխարհում ապրած
«Այդպիսի հրաշք երբէք չէր տեսած,
«Որ երկրի վրա կարող է լինել
«Աղջիկ արարած, անծնող, անմէր:
«Բայց բախտը ժպտաց ծնող-արքային,
«Մի օր նա նստած առակի ափին՝
«Իր սէ դարդերն էր լալիս, մորմորում,
«Երբ յանկարծ տեսաւ գլխավերելում


«Մի գնչու չորան՝ յենած մահակին՝
«Նայում է լռիկ արքայի ցաւին:
—«Ինչպէս տեսնում եմ, հեռից ես գալիս»,
«Որ այդպէս յոգնած, նստել ես, լալիս,
«Արի, ինձ պատմիր ցաւը քո սրտին,
«Գուցէ ես մի ճար անեմ քո դարդին»:
Թագաւորն ասաց.—«Բեգնից ինչ պահեմ.
«Չար ու կամակոր մէ որդի ունեմ,
«Այսօր յամառւել, էլ չի պսակւում,
«Իմ ծեր օրերին նա չի խնայում,
«Ուզում եմ կարգեմ նրան իմ ձեռքով,
«Որ հանգիստ սրտով մեռնեմ ապահով:
«Ասում է.—«գտի՛ր մի աղջիկ դու ինձ,
«Ո՞չ հօրից լինի, ո՛չ ծնող մօրից»:
Գնչու հովիւը խղճաց արքային.—
«Լսի՛ր, տէր-արքայ, քո խեղճ ծառային:
«Նայի՛ր առակի այս եղէգներին,
«Հանի՛ր քո սուրը, մի եղէգ կտրի՛ր,
«Կանաչ եղէգը պարզ ջուրը գցի՛ր,
«Նա կը դառնայ մի չքնաղ աղջիկ,
«Անմեղ ու նազուք, անհայր, անմայրիկ:
«Թո՛ղ որ կատարւի որդուդ փափագը,
«Թո՛ղ որ վերջանայ քո տառապանքը»:
«Որ այս խօսքերում ստույգ չըլայ,
«Ահա, թող սրանք լինեն ձեզ վկայ»:
Ասաց աղջիկը, հիւրերին դիմեց,
Մորթած աքլորին ու վագին առաց
«Վագ, դու կանաչի՛ր,
«Արլո՛ր, դու կանչի՛ր:
Այսպէս որ առաց, արքայ ու իշխան

Բերանները բաց՝ մի հրաշք տեսան:
 Մորթած աքլորը «ծուղրուղո՛ւ» կանչեց,
 Չորացած վազը ծաղկեց, կանաչեց:
 Կանչեց աքլորը ու մեռաւ կրկին,
 Կանաչեց վազը, չորացաւ վերստին:
 Աղջիկը առաջ տարաւ իր գործը.
 Նա և՛ պատմում էր, և՛ գործում գործը.
 Եւ ամեն անգամ, պատմութեան միջում,
 Վազ ու աքլորին վկայ էր կանչում:
 Վազն ու աքլորը հնազանդ նրան՝
 Կանգնում 'ին վկայ սուրբ ճշմարտութեան:

Գնչու թագուհին իր «հիւանդ» տեղից
 Լսում էր մէկ-մէկ, սարսափում ահից:
 Նա գլխի ընկաւ, — «բացում է բանը»:
 Տեսաւ, որ վատ է, «բուրդ է» իր բանը»:
 Ճշաց ցաւագին իր նստած տեղում,
 Պահանջեց՝ իրան տան հանգստութիւն,
 Որ նա հիւանդ է և թոյլ է զգում,
 Որ Եղեգնուհուն լսել չի ուզում:

Թագաւորն իսկոյն բանը հասկացաւ.
 Գնչու թագուհուն էլ ուշ չըզրաւ:
 Իսկ Եղեգնուհին պատմում էր, պատմում,
 Եւ ամեն գաղտնիք մէկ մէկ բաց անում.
 Եւ ամեն անգամ նա իր խօսքերին
 Վկայ էր կանչում վազն ու աքլորին:
 Վազն ու աքլորը՝ հնազանդ նրան,
 Վկայ 'ին կանգնում սուրբ ճշմարտութեան:

Պատմութիւնն եկաւ հասաւ այն տեղը,
 Որ արդէն պարզ էր Գնչուհու մեղը:
 Անմեղ աղջիկը բացեց ամեն բան,



Կարգով ու տեղին պատմեց ամեն բան.

Եւ ամեն անգամ նրա խօսքերը

Հաստատում էին վազն ու սըլորը:

Բաց մնաց բոլոր հիւրերի բերան:

Էլ այնուհետեւ պարզ էր ամեն բան:

Հայր թագաւորը նստեց դատաստան.

Սեւիկ Գնչուհուն վնոեց մահւան.

Հին հէքիաթները այսպէս են պատմում,

Երբ մէկին մահւան'ին դատապարտում,

Կապում էին նրան շար ձիու պոչից,

Կատաղած ձիուն թողնում ախոռից

Եւ ձին ամենի առնում էր թըռչում,

Դատապարտեալին սար ու ձոր խփում,

Ամբողջ մարմինը յօշոտում, ջարդում,

Եւ մեծ կտորը աւանջը թողնում:

Այսպէս պատժեց կախարդ Գնչուհին:

Թագաւորն առաւ իր Եղեգնուհին,


Նոր նշան դրեց յամառ զաւակին:

Տեղ, ոսկի տեղաց նրանց հարսանքին,

Մարգարիտ անձրեւ տեղաց զլըխներին.

Պատանին հասաւ սրտի մուրազին,

Թող գուր Էլ հասնէր ձեր մուրազներին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0400806

